ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2014 թվականի № 20 – Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 49 ՇԵՆՔԻ N 39 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԵՐԻՔՆԱԶ ԵՐԵՄՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20 -րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594 - 596 հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ) ենթակետով և հիմք ընդունելով Հերիքնազ Արամայիսի Երեմյանի դիմումը՝ **ավագանին որոշում է.**

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 13.58 ք.մ ընդհանուր մակերեսով N 39 բնակարանը (նախկին 1-ին հանրակացարան 26 սենյակ) անհատույց օտարել Հերիքնազ Արամայիսի Երեմյանի երեք անձից բաղկացած ընտանիքին:

1) Ընդհանուր համատեղ սեփականատերեր համարել՝
Հերիքնազ Արամայիսի Երեմյանին՝ ծնված 1968 թվականի ապրիլի 5-ին,
Եղիա Մարտիրոսի Վարդանյանին՝ ծնված 1966 թվականի հունվարի 1-ին,
Մանուկ Եղիայի Վարդանյանին ՝ ծնված 1997 թվականի օգոստոսի 5-ին:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Հերիքնազ Արամայիսի Երեմյանի կողմից :

3. Ուժը կորցրած ճանաչել Բյուրեղավանի քաղաքային համայնքի ավագանու 2012 թվականի հունիսի 29-ի «Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող գույքը Հերիքնազ Արամայիսի Երեմյանի ընտանիքին օտարելու (նվիրելու) մասին N 93 - Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ (9) **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ
ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ
ԱՐՄԱՆ ԽԱՆԶԱԴՅԱՆ
ԳԱՐԻԿ ԾԱՏՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ
ԹԱԳՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՐՄԱՆ ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ